



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 06 » *հոկտեմբեր* 2017 թ. N 392-ՂԻ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ, ՀՈՂԵՐԻ
ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ ԵՎ ԵՐԱՇՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ» ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը» և ի կատարումն Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 24.9/395991-17 արձանագրության 3-րդ կետի հանձնարարականի

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ '

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչությանը և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին՝
 - 1) Սույն ծրագրի իրականացման նպատակով բանակցություններ վարել միջազգային դոնոր կազմակերպությունների, ազգային մակարդակով գործարարների, հիմնադրամների, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների հետ՝ անհրաժեշտ ներդրումների վերաբերյալ:
 3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՆԱԽԱՐԱՐ *Ա.ՄԻՆԱՍՅԱՆ* Ա.ՄԻՆԱՍՅԱՆ

<< 06 >> *հոկտեմբեր* >> 2017 թ.
ք. Երևան